

ՇՊՀ ռեկտորի ԺՊ գիտական խորհրդի նախագահ  
Եր. Սերոբյանին

Հարգելի պարոն Սերոբյան.

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա. Հարությունյանի 12.06.2019թ. ԱԺ-ում՝ հանձնաժողովների համատեղ նիստում արված հայտարարության քննարկման նպատակով՝ առաջնորդվելով ՇՊՀ կանոնադրության 52-րդ կետով, խնդրում ենք հրավիրել գիտական խորհրդի արտահերթ նիստ.

Գիտական խորհրդի  
քարտուղար՝

Կ. Պետրոսյան

Արհմիութենական

Վ. Խաչատրյան

կազմակերպության նախագահ՝

Բնագիտամաթեմատիկական

Բ. Պողոսյան

ֆակուլտետի ղեկան՝

Սոցիալական գիտությունների և

Օ. Հովհաննիսյան

իրավունքի ֆակուլտետի ղեկան՝

Ա. Մկրտչյան

Ռազմական ամբիոնի պետ՝

Ուսումնագիտական

խորհրդատվական կենտրոն-

Թ. Խաչատրյան

գրադարանի տնօրեն՝

Արտաքին համագործակցության

և հասարակայնության հետ

Հ. Մելքոնյան

կապերի կենտրոնի տնօրեն՝

Անձնակազմի կառավարման և

իրավական ապահովման բաժնի

Ա. Հովհաննիսյան

պետ՝

Մանկավարժության ամբիոնի

Ռ. Մարդոյան

պրոֆեսոր՝

Հումանիտար գիտությունների և

Թ. Մելիքյան

արվեստի ֆակուլտետի ղեկան՝

Գիտական

քաղաքականության, որակի

ապահովման և կառավարման

Ա. Սարգսյան

կենտրոնի տնօրեն՝

13.06.2019թ.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

### «Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 13.06.2019թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 28 (քսանութ) անդամից 24-ը (քսանչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Մերոբյան Երվանդ Մերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
6. **Մելքոնյան Հովիկ Մենքերիմի** – Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. **Մկրտչյան Արթուր Վազգենի** — Ռազմական ամբիոնի պետ
8. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
9. **Հովհաննիսյան Արտաշես Ալեքսանի**– Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ
10. **Քալաջյան Ռաֆֆի Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
11. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Հովհաննիսյան Անահիտ Մերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
13. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
14. **Հայրապետյան Մերգո Արտուշի** -Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
15. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր

- 16. Մեխքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
- 17. Խորիկյան Հովհաննես Գեորգու-** Պատմ. գիտ. թեոնածու, պատմության և փիլիսոփայության ամբիոնի դոցենտ
- 18. Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
- 19. Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
- 20. Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
- 21. Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
- 22. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
- 23. Հովհաննիսյան Լիլիթ Գոռի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 2-րդ կուրսի ուսանողուհի
- 24. Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռեզմական ամբիոն, «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանող

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա. Հարությունյանի 12.06.2019թ. ԱԺ-ում՝ հանձնաժողովների համատեղ նիստում արված հայտարարության հրապարակմանն ուղղված պատասխանի մասին  
**ԼՍԵՑԻՆ՝**

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա. Հարությունյանի 12.06.2019թ. ԱԺ-ում՝ հանձնաժողովների համատեղ նիստում արված հայտարարության հրապարակմանն ուղղված պատասխանի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ 12.06.2019թ. ԱԺ-ում՝ հանձնաժողովների համատեղ նիստում նախարարը հայտարարել է, որ ՇՊՀ-ում բարոյահոգեբանական իրավիճակը շարունակում է մնալ լարված և չշտկվելու դեպքում այն կամ կլուծարվի, կամ կմիավորվի, նշելով, որ այս հայտարարությունը առաջացրել է բուհի հանրային գայրույթն ու դժգոհությունը, որով էլ պայմանավորված գիտական խորհրդի անդամների պահանջով հրավիրվել է արտահերթ գիտական խորհրդի ընդլայնված նիստ (ներկա են նաև ամբիոնի վարիչներն էլ, որտեղ դիրքորոշում կարտահայտենք նախարարի հայտարարության առնչությամբ (Պարոն Սերոբյանը բառացի կարդաց «Առավոտ» թերթում տպագրված նախարարի հայտարարությունը): Պարոն Սերոբյանը ներկայացրեց նաև, որ իրենց կողմից կազմվել է պատասխան՝ նախագծի ձևով և բազմացնելու միջոցով գիտական խորհրդի անդամները ծանոթանալով տեքստին իրենց կարծիքը կարող են արտահայտել, միևնույն ժամանակ հորդորեց կարծիք հայտնելիս մնալ խոհեմության, կոռեկտության ու սառնասրտության տիրույթում՝ առաջնորդվելով միայն բուհի շահերով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

Հ. Խորիկյանին հետաքրքրում էր, թե բուհի գիտական խորհուրդը նման հարցեր կարող է քննարկել, նախարարի բանավոր հայտարարությունները քննարկել, նման իրավասություն ունի՞:

Պարոն Սերոբյանը հարցով դիմեց Հովհ. Խորիկյանին, - Դուք գտնում եք որ այս հարցը մենք չպե՞տք է քննարկենք :

**Պարոն Խորիկյանը** պատասխանեց, որ չեն քննարկելու, քանի որ սա գիտական խորհրդի գործառույթ չէ, այլ Ձեր կողմից կարող եք հայտարարություն տարածել որպես այս պահին փաստացի բուհի ղեկավար:

**Պարոն Սերոբյանը** նշեց, որ եթե նույնիսկ ինքն իր կողմից հայտարարությամբ հանդես գա, կարծում է, որ իրավունք ունի հրավիրելու գիտական խորհրդի նիստ և լսելու խորհրդի անդամների կարծիքը, որն իր համար շատ կարևոր է:

**Ա. Մկրտչյանի** կարծիքով ինքը չի հասկանում, թե ինչ բարոյահոգեբանական մթնոլորտի մասին է խոսում նախարարը, իր կարծիքով կա աշխատանքային կոնֆլիկտ, որը բոլոր կուլեկտիվներում էլ կա:

**Պարոն Սերոբյանը** նշեց, որ իր ընկալմամբ նախարարը նշել է տարբերակներ, որ նման ձևով շարունակվելու դեպքում կամ կլուծարվի, կամ կմիավորվի, ընդ որում միավորման մասին խոսում էինք արդեն 15 տարի: Մեզ մոտ կա իրավիճակ, որ ամեն շաբաթ ստիպված պատասխանում ենք ուսանողի, դասախոսի, ամբիոնի վարիչի, հայցորդների բողոքներին: Նորից դիմելով Պարոն Խորիկյանին պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը գտնում է, որ նման իրավիճակում գիտական խորհուրդը ձեռքերը ծալած չպետք է մնա, սակայն եթե բոլորը գտնում են, որ արձագանքե պետք էչ, ապա նիստը կարող են ավարտել:

**Պարոն Խորիկյանը** ասաց, որ կուլեկտիվը կարող է արձագանքել:

**Տիկին Սարգոյանի** կարծիքով կուլեկտիվը կարող է միանալ գիտական խորհրդի նախաձեռնությանը:

**Ն. Ավետիսյանի** կարծիքով հանրապետության բոլոր բուհերում էլ նույն իրավիճակն է, սակայն իրենց մեջ են մնում իրենց կոնֆլիկտները, կամք են դրսևորում բուհի ներսում հարցերը լուծելու համար:

**Ս. Հայրապետյանի** կարծիքով պետք է կոշտ արձագանքել նախարարի հայտարարությանը: Համալսարանում նույն իրավիճակն է, սակայն այնտեղ այնքան խելացի են մարդիկ, որենց անձնական կեղտը հրապարակավ չեն ցույց տալիս,իսկ մենք ոչինչ չեղած տեղը վազում ենք դատարան, այս հարցերը կարելի է կուլեկտիվի մեջ լուծել, սա արդեն բացթողում է: Դիմեք նախարարին, որ բացառության կարգով ռեկտորի հարցը լուծել նշանակմամբ, քանի որ հոգաբարձուների խորհուրդը արդեն որերորդ անգամ է ռեկտոր չի ընտրում, թե չէ

ամեն մեկը այստեղ ռեկտորի կարծրատիպ ունի: Նշանակեն այնպիսի մարդու, որ բոլորին հանգստացնի, սաստի, կոլեկտիվ ստեղծի, այսպես չի կարելի, իսկ ինչ կմնա լուծարելուն, որ նախարարն է այդքան համարձակություն ունեցել 86 տարվա բուհը լուծարել: Իմ Կարծիքով պետք է պատասխանել նախարարին հայտարարությամբ, որ իր կողմից կատարված դիտարկումները չափազանցեցված են, միաժամանակ խնդրել նշանակել ռեկտոր:

**Պարոն Սերոբյանը** արձագանքեց, որ սա արդեն օրենսդրական խնդիր է և նախարարը չունի նման իրավունք:

**Վ. Խաչատրյանի** կարծիքով այս հարցը անպայման պետք է քննարկել, հետո աստվածաշնչում կա նախադասություն, որ ով մեղավոր չի, թող առաջինը քարը նա նետի, ինքը այս առումով նախարարին ունի մի հարց, թե ինքը անձամբ ինչ է արել վիճակը կարգավորելու համար, բարոյահոգեբանական իրավիճակը լավացնելու համար, ինքը եկել է մի օր այստեղ, գիշերը ժամը 11-ին գնացել ժամը 2-ին, փորձել է հարց լուծել, այնուհետև պարոն խաչատրյանը նշեց, որ ինքը նախարարի հայտարարության մեջ քաղաքական հայտարարություն է տեսնում, նաև սպառնալիք, ոչ մեկն էլ չի ժխտում որ բուհում պրոբլեմներ կան և ինքը բոլորին խնդրում է, որ անձնական ամբիցիաները մի կողմ դրած համախմբվեն հարցերը լուծեն, այլապես հարցերը չեն լուծվելու: Իր կարծիքով նախարարի հայտարարությանը պետք է պատասխան տալ, միքիչ էլ չոր պատասխան, թր չի կարելի այսպես խոսել մի կոլեկտիվի հետ, որի համար ոչինչ չի արել վիճակը լավացնելու համար:

**Ս. Սարգսյանն** իր ձևակերպմամբ այլ տեսակետից է մոտենալու հարցին, քննարկել հարցը բոլոր դեպքերում իրավունք ունեն, սակայն առաջին հերթին պետք է մոտենալ պատճառին, որը նախարարը նշում է կան խմբեր, որոնք բաղոքում են և երևի բողոքները շատ են դժգոհությունները շատ են, դեկավարությունը այդ խմբերի հետ պետք է կոմպրոմիսի գնա ընդհմադիրների, խմբերի հետ, որպեսզի դրանք չհասնեն ոչ լրատվությանը, ոչ նախարարին, ոչ վարչապետին և ինքը գտնում է, որ չկան լուծումները, մեկը մյուսի հետևից կուտակվում են, վերևից էլ լուծում չեն տալիս և իրավիճակը բարդանում է, ինքը

կողմ է պարոն Հայրապետյանի հետ, որ պետք է արագ ռեկտոր ընտրվի, որ ոչ թե բուհը տանեն լուծարման, այլ հարցերը լուծելուն:

Պարոն Սերոբյանը պատասխանեց Ս. Սարգսյանին, նշելով, որ նրա ասածների մեջ կար նաև մեղադրանք ինչ որ տեղ իր հասցեյին, որը նպատակադրված չէր:

Պարոն Սարգսյանը շեշտեց, որ ինքը նկարի ոներ ընդհանուր ղեկավարությանը: Այնուհետև պարոն Սերոբյանը շարունակեց, որ բոլոր այն բողոքները, որոնք հասել են նախարարին, դրանց քննարկումներից մեկին պարոն Սարգսյանն էլ է ներկա եղել և ղեկավարությունը գնացել է կողմերին հաշտեցնելու ճանապարհով, ցավոք մենք ունենք այն, որ կողմերից ոչ մեկը չի ուզում ոչ մի քայլով զիջել, ելնելով այս ինիցիատիվային իրավիճակից շատ դեպքերում փորձել ենք անընդհատ գնալ ոչ կոշտ միջոցներ ձեռնարկելու ճանապարհով, ոչ մեկին նկատողություն չտալ, սակայն այս ամեն ինչը հրապարակվում և հանրայնացվում է մեր կողմից:

Ռ. Մարդոյանի կարծիքով իրենք բոլորն էլ լավ գիտեն իրենց պրոբլեմները, սակայն այսօր չեն հավաքվել այդ խնդիրները նորից քննարկելու, այլ արձագանքելու ենք նախարարի հայտարարությանը, թե ոչ: Բուհը ինձ համար շատ կարևոր նշանակություն ունի, և անձնական և հասարակական արժեք է, 17 տարեկանից այս բուհում է, արդեն 34 տարի բուհում է, ինքը գտնում է, որ նախարարը բարոյական իրավունք չունի բուհի լուծարման հարց բարձրացնելու: և իրենք պետք է հայտարարությամբ հանդես գան:

**Թ. Մելիքյանը** ներկայացրեց, որ բոլորն էլ գիտեն, թե ինչպես է բուհը գոյատևել երկրաշարժի ժամանակ, այն ժամանակ լուծարելը ավելի մոտ էր, կարելի է ասել, քանի, որ չկար շենք, չկար ոչինչ և կոլեգիայի որոշում կար բուհը տեղափոխել Երևան, սակայն դասընթացները կազմակերպվեցին տնակներում, ձմռանը վառարաններով տաքանալով, հիմա կարծես զրոյացվում է այս ամենը և ինքը գտնում է, որ իրենք իրավունք ուղղակի չունեն չպատասխանելու նախարարի հայտարարությանը, քանի որ կյանք են ներդրել բուհի կայացման մեջ և երիտասարդ սերունդն էլ պիտի շարունակի իրենց գործը, գիտխորհուրդը միահամուռ պիտի պատասխանի, այս տարի լավ ընդունելություն ունենք և մեր հայտարարությունը հեռուստատեսությամբ թող հնչի:

**Հ. Դրմեյանին** հետաքրքրում էր թե ինչ դիրքորոշում ունի հոգաբարձուների խորհուրդը, քանի որ հարցերի լուծումները նաև խորհրդով պետք է լուծվեն և կարծում է, որ պետք է պատասխանել նախարարին:

**Է. Մաթևոսյանը** ներկայացրեց, որ ինքը որպես հոգաբարձուների անդամ տեղեկացնում է, որ այս հարցը չի քննարկվել խորհրդի կողմից և ուզում է ասել, որ խորհրդի նիստերը ամեն անգամ անցնում են թեժ, հարցերին լուծումներ գտնելու մթնոլորտում, այնուհետև շարունակեց, որ կանոնադրությամբ մի կետ չկա, որ բարոյահոգեբանական վատ մթնոլորտի պատճառով բուհի լուծարման հարցի մասին խոսք գնա և ինքը այս առումով համաձայն չէ նախարարի հայտարարության հետ:

**Ն. Ավետիսյանի** կարծիքով իրենք այստեղ հավաքվել են, որ նախարարին կոչ անենք, չմանրացնելով հարցը, մենք Շիրակի մարզի ամենախոշոր հարկատուն ենք, դպրոց, քոլեջ ունենք, մոտ 5 հազար աշխատող ունենք: Ձևակերպենք կոչը, որը բոլորիս կողմից պետք է հավանության արժանանա:

**Ա. Հովհաննիսյանի** կարծիքով պետք է նախարարի հայտարարությանը տալ կոշտ պատասխան, իր կարծիքով հիմնադրամը կարող է միայն ինքնալուծարվել, իրենց չեն կարող միավորել, իրենց պետք է միավորվեն:

**Ս. Սարգսյանի** կարծիքով եթե նախարարը նման հարց է բարձրացնում, ուրեմն կառավարությունը կանգնած է նրա թիկունքին, հիմա միայն բուհը պետք է ստանձնի ներսում խնդիրները լուծելու կամք դրսևորել:

Պարոն Սերոբյանը գտնում է, որ նախարարի ասածը ոչ թե սպառնալիք է, այլ նաև լուծումներ է առաջարկում և ինքը պարոն Սարգսյանի հետ համաձայն է, որ լրիվ հնարավոր է, որ տարբեր ճանապարհներով իրականացվի նախարարի հայտարարությունը, ունենք պրոբլեմ, բայց եթե կոշտ արձագանքենք, ապա դա հարցի լուծում չի լինի, այնուհետև առաջարկեց Ն. Ավետիսյանին կարդալ նախորոք գրված կոչի նախագիծը.

Ի պատասխան Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա. Հարությունյանի՝ 12.06.2019թ. ԱԾ-ում՝ հանձնաժողովների համատեղ նիստում արված հայտարարության՝ ՇՊՀ-ի հանրույթը կոչ է անում.



Հարգելի պարոն նախարար, ՇՊՀ-ի վերաբերյալ Ձեզ ներկայացված տեղեկատվությունը կողմնակալ է և ընտրողական: ՇՊՀ-ն այսօր ապրում է իր բնականոն կյանքով: Այս տարի նշելու ենք մեր բուհի 85-ամյակը և այսուհետ ընդունելով ժամանակի մարտահրավերները՝ հաստատական կերպով Ձեզ հետ նշելու ենք նաև բուհի 90-ամյակը:

Ներկայացվող բարոյահոգեբանական լարված մթնոլորտը վատ ղեկավարման և իրականացվող նպատակադիր քաղաքականության հետևանք է, որին երկար ժամանակ չէինք ուզում հավատալ: Բուհի ֆինանսական վիճակը չի համապատասխանում իրականությանը: Որոշ ուժերի հեռահար հավակնությունների և հուսահատ ճիգերի գործադրման արդյունքում բուհի ճակատագիրը գոհասեղանին դնելը Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի համար կունենա կործանարար հետևանքներ:

Ակնհայտ է, որ ՀՀ կրթական համակարգը կարոտ է բարեփոխումների, բայց նման վերաբերմունքն աշխատակիցների, սովորողների և 85-ամյա պատմություն ունեցող բուհի նկատմամբ պարզապես չի կարող նպաստել բուհի հետագա զարգացմանը:

Լիահույս ենք Ձեր պետական մտածողության և կամքի դրսևորմանը. բուհի դերակատարությունը մեծ է մարզի զարգացման գործում և նախարարության ջանքերով ևս կարժևորվի այն՝ Շիրակի մարզը չտանելով ծերացման:

**ՇՊՀ Գիտական խորհուրդ.**

Պարոն Սերոբյանը նկատեց, որ ներկայացվող տեքստի հետ ինքը այնքան էլ համաձայն չէ, քանի, որ կարծես ըստ գրվածի նախարարությանը մենք մեղադրական ակտ ենք ներկայացնում և առաջարկեց, որ «Ներկայացվող բարոյահոգեբանական լարված մթնոլորտը վատ ղեկավարման և իրականացվող նպատակադիր քաղաքականության հետևանք է, որին երկար ժամանակ չէինք ուզում հավատալ:» նախադասությունը դուրս բերել՝ պահելով կոռեկտության սահմանները, ինքը գտնում է նաև, որ որոշ անձանց ջրաղացին մենք ջուր են լցնում:

Պարոն Վ. Խաչատրյանը առաջարկեց դնել քվեարկության տեքստը, քանի որ գիտական խորհրդի անդամների ռեպլիկներից հասկացվեց, որ չեն ուզում փոփոխել տեքստը:

Պարոն Սերոբյանը առաջարկեց դրեց քվեարկության նախ այն, որ կոչով դիմեն նախարարին:

**Քվեարկեցին՝ կողմ՝ 21. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Պարոն Քալաջյանը առաջարկեց «Բուհի ֆինանսական վիճակը չի համապատասխանում իրականությանը» նախադասությունը տեքստից դուրս բերել, ասելով, որ եթե նախարարը ասում է, թե բուհը ֆինանսական խնդիր չունի, կարծես իրենք հակառակն են պնդում:

Ա. Սարգսյանի կարծիքով, եթե ֆինանսական խնդիրներ չկան, այդ դեպքում ռազմավարական խնդիրներ իրականացնելիս, ինչու ենք խնդիր դնում, որ սա չենք կարող իրականացնել, քանի որ ֆինանսներ չկան:

Պարոն Սերոբյանը հարցրեց, թե ինչ խնդիրներ չենք իրականացրել,

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ տպարանի հարցը չի լուծվել:

Պարոն Սերոբյանը դիտարկում կատարեց, որ այդ հարցը իր կարծիքով պետք է բարձրացվեր 2, 3 տարի առաջ, երբ բուհի բյուջեյում բավականին գումար կար:

Պարոն Սերոբյանը առաջարկեց, որ տեքստը դրվի քվեարկության երկու տարբերակով.

1. Տեքստից հանված «Բուհի ֆինանսական վիճակը չի համապատասխանում իրականությանը» նախադասությունը տարբերակով,

2. տեքստից հանված «Ներկայացվող բարոյահոգեբանական լարված մթնոլորտը վատ դեկավարման և իրականացվող նպատակադիր քաղաքականության հետևանք է, որին երկար ժամանակ չէինք ուզում հավատալ:» նախադասությունը տարբերակով:

Քվեարկեցին՝ «Բուհի ֆինանսական վիճակը չի համապատասխանում իրականությանը» նախադասությունը տեքստից դուրս բերված, տեքստի մյուս մասը լրիվ պահպանված տարբերակով:

**Քվեարկեցին՝ կողմ՝ 16. դեմ՝ 2 (Ս. Սարգսյան, Եր. Սերոբյան), ձեռնպահ՝ 2 ( Ա. Հովհաննիսյան, Ս. Հայրապետյան):**

Պարոն Ս. Սարգսյանը, որը դեմ էր արտահայտվեց, որ ինքը դեմ է ընդհանրապես տարբերակի ցանկացած փոփոխության, քանի որ ըստ իրեն սա որևէ պատասխան չէ նախարարի ելույթին, այլ ուղղակի սպառնալիք է նախարարին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Կոչով դիմել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա.Հարությունյանին.

Ի պատասխան Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ա. Հարությունյանի՝ 12.06.2019թ. ԱԺ-ում՝ հանձնաժողովների համատեղ նիստում արված հայտարարության՝ ՇՊՀ-ի հանրույթը կոչ է անում.

Հարգելի պարոն նախարար, ՇՊՀ-ի վերաբերյալ Ձեզ ներկայացված տեղեկատվությունը կողմնակալ է և ընտրողական: ՇՊՀ-ն այսօր ապրում է իր բնականոն կյանքով: Այս տարի նշելու ենք մեր բուհի 85-ամյակը և այսուհետ ընդունելով ժամանակի մարտահրավերները՝ հաստատակամ կերպով Ձեզ հետ նշելու ենք նաև բուհի 90-ամյակը:

Ներկայացվող բարոյահոգեբանական լարված մթնոլորտը վատ դեկավարման և իրականացվող նպատակադիր քաղաքականության հետևանք է, որին երկար ժամանակ չէինք ուզում հավատալ: Որոշ ուժերի հեռահար հավակնությունների և հուսահատ ճիգերի գործադրման արդյունքում բուհի ճակատագիրը գոհասեղանին դնելը Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի համար կունենա կործանարար հետևանքներ:

Ակնհայտ է, որ ՀՀ կրթական համակարգը կարոտ է բարեփոխումների, բայց նման վերաբերմունքն աշխատակիցների, սովորողների և 85-ամյա պատմություն ունեցող բուհի նկատմամբ պարզապես չի կարող նպաստել բուհի հետագա զարգացմանը:

Լիահույս ենք Ձեր պետական մտածողության և կամքի դրսևորմանը. բուհի դերակատարությունը մեծ է մարզի զարգացման գործում և նախարարության ջանքերով ևս կարժևորվի այն՝ Շիրակի մարզը չտանելով ծերացման:

**ՇՊՀ Գիտական խորհուրդ.**

Տիկին Մելիքյանը հարցրեց, թե ու՞ր ենք տեղադրելու:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ բուհի կայքում է տեղադրվելու:

Պարոն Հայրապետյանի կարծիքով տեքստը ձևակերպված է մեղմ և ինքը կարող է իր անունից առանձին նամակով պատասխանել նախարարի ելույթին:

Պարոն Սերոբյանը նշեց, որ դա իր իրավունքն է և ինքը խնդիր չի տեսնում:

Գիտական խորհրդի նախագահ՝  
 Գիտական խորհրդի  
 քարտուղար՝  
 Արհմիութենական  
 կազմակերպության նախագահ՝  
 Բնագիտամաթեմատիկական  
 ֆակուլտետի դեկան՝  
 Սոցիալական գիտությունների և  
 իրավունքի ֆակուլտետի դեկան՝  
 Ռազմական ամբիոնի պետ՝  
 Ուսումնագիտական  
 խորհրդատվական կենտրոն-  
 գրադարանի տնօրեն՝  
 Արտաքին համագործակցության  
 և հասարակայնության հետ  
 կապերի կենտրոնի տնօրեն՝  
 Տինանսատնտեսական  
 վերլուծությունների,  
 ծրագրավորման և  
 հաշվապահական հաշվառման  
 բաժնի վարիչ-գլխավոր  
 հաշվապահ՝  
 Անձնակազմի կառավարման և  
 իրավական ապահովման բաժնի  
 պետ  
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
 տեղեկատվական  
 տեխնոլոգիաների ամբիոնի  
 պրոֆեսոր՝  
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
 տեղեկատվական  
 տեխնոլոգիաների ամբիոնի  
 պրոֆեսոր՝  
 Անգլերեն լեզվի և  
 գրականության ամբիոնի  
 պրոֆեսոր՝  
 Հայոց լեզվի և գրականության  
 ամբիոնի դոցենտ՝  
 Մանկավարժության ամբիոնի  
 պրոֆեսոր՝

Ե. Սերոբյան  
 Կ. Պետրոսյան  
 Վ. Խաչատրյան  
 Բ. Պողոսյան  
 Օ. Հովհաննիսյան  
 Ա. Մկրտչյան  
 Թ. Խաչատրյան  
 Հ. Մելքոնյան  
 Ռ. Քալաջյան  
 Ա. Հովհաննիսյան  
 Ս. Սարգսյան  
 Հ. Դրմեյան  
 Ա. Հովհաննիսյան  
 Ս. Հայրապետյան  
 Ռ. Մարդոյան

Հումանիտար գիտությունների և  
 արվեստի ֆակուլտետի դեկան՝  
 Միջմշակութային  
 հաղորդակցության և  
 զբոսաշրջության ամբիոնի  
 ասիստենտ՝  
 Մանկավարժության ամբիոնի  
 դոցենտ՝  
 Պատմության և  
 փիլիսոփայության ամբիոնի  
 դոցենտ  
 Մանկավարժության ամբիոնի  
 դոցենտ՝  
 Գիտական  
 քաղաքականության, որակի  
 ապահովման և կառավարման  
 կենտրոնի տնօրեն՝  
 Աշխարհագրության,  
 կենսաբանության և քիմիայի  
 ամբիոնի դոցենտ՝  
 ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ,  
 Հումանիտար գիտությունների և  
 արվեստի ֆակուլտետ,  
 «Լրագրություն» 4-րդ կուրսի  
 ուսանողուհի՝  
 Սոցիալական գիտությունների և  
 իրավունքի ֆակուլտետ,  
 «Սոցիալական աշխատանք» 4-  
 րդ կուրսի ուսանողուհի՝  
 Անգլերեն լեզու և  
 գրականություն IV կուրսի  
 ուսանողուհի՝  
 Մանկավարժության  
 ֆակուլտետ, «Մեթոդիկա» 4-րդ  
 կուրսի ուսանողուհի  
 Բնագիտամաթեմատիկական  
 ֆակուլտետ,  
 «Աշխարհագրություն» 4-րդ  
 կուրսի ուսանողուհի

Թ. Մելիքյան  
 Շ. Տեր-Ադամյան  
 Լ. Ղուկասյան  
 Հ. Խորիկյան  
 Լ. Հակոբյան  
 Ա. Սարգսյան  
 Լ. Մարտիրոսյան  
 Ջ. Ղազարյան  
 Ա. Խաչատրյան  
 Հ. Ավետիսյան  
 Է. Ավագյան  
 Լ. Հովհաննիսյան

ՈւԳԸ նախագահ,  
աշխարհագրություն II կուրսի  
ուսանող (մագիստրատուրա)՝

Ռազմական ամբիոն,  
«Նախագորակոչային և  
Ֆիզիկական պատրաստություն»  
4-րդ կուրսի ուսանող՝

Ք. Հարությունյան

Ս. Հարությունյան